ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ______ Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի ______ ք. Վանաձոր

Մարզ ______ համայնք

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմն. դպրոց, 2 «Ա» դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Անդրեասյան Նաիրա Հրաչիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

## ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)
   1 Ա դասարանում սովորում են 29 աշակերտ, որոնցից՝ 14 աղջիկ, 15 տղա: Դասարանը ընդհանուր հանգիստ է, համերաշխ, աշխատասեր են, ընդունակ: Գրեթե բոլորն ակտիվորեն մասնակցում են ուսումնական գործընթացին : Պարտաճանաչ կատարում են հանձնարարությունները, սովորում են իրենց ուժերի ներածին չափով, դասի են հաճախում մաքուր եւ կոկիկ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
   Աշակերտների հաճախումների հսկողություն:
   Դասարանի աշակերտների առաջադիմության ուղղությամբ սահմանել վերահսկողություն:
   Կատարել դասարանի աշակերտների ձեռքբերումների , հաջողությունների եւ բացթողումների ուսումնասիրություն:
   Սովորողների հետաքրքրությունների  ու նախասիրությունների ուսումնասիրություն եւ դրանց զարգացմանն անհրաժեշտ պայմանների ապահովում:
   Ծանոթացնել սովորողների իրավունքներին եւ պարտականություններին:
   Առավել «դժվար» երեխաների հետ աշխատանքի կազմակերպում:
   Աշակերտների մոտ արատավոր երեւույթների կանխարգելման նպատակով բազմաբնույթ աշխատանքների կազմակերպում:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

   3.1 Հոգևոր դաստիարակություն
   Աշակերտներին պատկերացում տալ ազգային մշակույթի, ժողովրդական արժեքների, տարբեր ծիսակատարությունների, եկեղեցական տոների, դրանք նշելու ավանդույթների եւ ձեւերի մասին, կրոնի դերի մասին:

   3.2 Գեղագիտական դաստիարակություն
   Ձեւավորել եւ զարգացնել գեղագիտական ճաշակ, կարողանան նկատել գեղեցիկը բնության մեջ, արվեստում: Գեղեցիկ կահավորել դասասենյակը աշակերտների օգնությամբ ժամանակին համահունչ : Անցկացնել զրույցներ , քննարկումներ, ցուցադրել ֆիլմեր, կազմակերպել հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտներին ծանոթացնել հայ ժողովրդի կյանքի անցած ուղղուն, փառավոր անցյալին ու ներկային: Տալ տեղեկություններ ազգային հերոսների եւ նրանց տարած հաղթանակների մասին: Հարգանք եւ սեր ձեւավորել զինվորականի մասնագիտության հանդեպ, հայրենիքը թշնամուց պաշտպանելու գիտակցումը եւ պատրաստակամությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Հետեւել աշակերտների ճիշտ նստելաձեւին՝ ճիշտ կեցվածքի ձեւավորման համար: Կազմակերպել աշակերտների ներդաշնակ ֆիզիկական զարգացման, առողջության ամրապնդման, օրգանիզմի կոփման, բարձր աշխատունակության բարձրացմանը նպաստող միջոցառումներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ձեւավորել սեր աշխատանքի նկատմամբ: Մաքուր պահել դասասենյակը, շրջապատող միջավայրը: Առանձնացնել դասարանական աշխատանքները եւ տնային աշխատանքները: Սովորեցնել կատարել փոքր ֆիզիկական աշխատանքներ, օգնել միմյանց եւ մեծերին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Ձեւավորել եւ զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, սիրել եւ պաշտպանել, հոգ տանել: Սովորեցնել խնամել տնային բույսերը, դասասենյակում կանաչ անկյուն ստեղծել: Անցկացնել միջոցառումներ:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Հաճախակի անցկացնել ծնողական ժողովներ, ծնողներին ներգրավել դասարանի աշխատանքներին եւ միջոցառումների կազմակերպմանը: Երեխաների կենսակերպի, նրանց ընտանիքների սոցիալական պայմանների ուսումնասիրում: Սոցիալապես անապահով եւ խնդիրներ ունեցող ընտանիքների հայտնաբերում եւ հաշվառում:

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթները | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Ընդունել աշակերտներ, ծանոթանալ և դասարանի հետ ծանոթացնել նոր աշակերտներին,<br>Զրուցել «Ես և իմ դասարանը» թեմայով, հիշեցնել վարքի կուլտուրայի մասին:<br>Անցկացնել վարվեցողության կուլտուրայի պարապմունքներ | սեպտեմբեր | Դասվար, աշակերտներ |
| II | Զրույց` ,,Ճանաչիր և հիշիր»» Վ. Համբարձումյան 115 | սեպտեմբեր | Դասվար |
| III | Ընտրել դասարանի ավագ, սանիտարներ, օգնականներ<br>Սահմանել հերթապահության կարգ | սեպտեմբեր | Դասվար |
| IV | Ստեղծել կազմակերպական անկյուն, սովորեցնել ՀՀ օրհներգը, փակցնել ՀՀ օրհներգը, դրոշը, զինանշանը: | սեպտեմբեր | Դասվար |
| V | Զրույց պատմական հայրենիքի մասին, տեսաֆիլմի դիտում | սեպտեմբեր | Դասվար |
| VI | «Դու իմ սրտում ես,իմ Վանաձոր» զրույց` ««մեր քաղաքի պատմությունը»», տեսարժան վայրերը »», վավերագրական ֆիլմի դիտում: | հոկտեմբեր | Դասվար |
| VII | Ուսուցչի օրվան նվիրված պաստառի պատրաստում<br>« Շնորհավո՜ր տոնդ, սիրելի՜ ուսուցիչ » | հոկտեմբեր | Դասվար, աշակերտներ |
| VIII | Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները<br>Մանկական ճանապարհատրանսպորտային վնասվածքներ | հոկտեմբեր | Դասվար, աշակերտներ |
| IX | Այցեր տուն-թանգարաններ, գեղագիտական կենտրոններ, պատկերասրահներ | ուստարվա ընթացքում | Դասվար, աշակերտներ |
| X | Մրցույթ` «Ամենագեղեցիկն իմ դասարանն է» | ուստարվա ընթացքում | Դասվար, աշակերտներ |
| XI | Իմ իրավունքներն ու պարտականությունները | Նոյեմբեր | Դասվար |
| XII | Ցերեկույթ` ««Հայի հացը սկսվում է գութանից ու հորովելից»» | նոյեմբեր | Դասվար աշակերտներ |
| XIII | Սովորողների մեջ դաստիարակել հասարակական վայրում բարեկիրթ վարվելակերպ | նոյեմբեր | Դասվար |
| XIV | Զրույց` Իմ ընտանիքի ավանդույթները: Պատրաստել ընտանեկան լուսանկար և փոքրիկ պատմություն: | նոյեմբեր | Դասվար |
| XV | Համագործակցել դպրոցի հոգեբանի,սոցմանկավարժի հետ | դեկտեմբեր | Դասվար, |
| XVI | Զրույց «1988թ դեկտեմբերի 7 ավերիչ երկրաշարժը» թեմայով: Ֆիլմի ցուցադրում: Տարիհանում-վարժանք: | դեկտեմբեր | Դասվար |
| XVII | _Դասարանի ամանորյա ներքին հարդարում | դեկտեմբեր | Դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| | _Պաստառների պատրաստում<br>_Ամանորյա Ներկայացումների դիտում քաղաքային թատրոններում | | |
| XVIII | Ամանորյա հանդես՝ «Մի անգամ, ամանորի գիշերը | դեկտեմբեր | Դասվար ծնողխորհրդի անդամներ |
| XIX | Հայոց բանակի օրվա առթիվ ստեղծել հայրենասիրական անկյուն | հունվար | Դասվար |
| XX | Մայրենի լեզվի օր | փետրվար | Դասվար |
| XXI | Զրույց՝ «Լավ ընկերը…» | փետրվար | Դասվար |
| XXII | ա/Ընթերցանության մրցույթ տարրական դպրոցի աշակերտների միջև<br>բ/Ընթերցասեր աշակերտ | ուստարվա ընթացքում | Դասվար |
| XXIII | Հովհաննես Թումանյան-155<br>««Արթուն պահենք մեր մեջ ընթերցողին»» գրքերի նվիրում | փետրվար | Դասվար |
| XXIV | «Դռները բա՜ցեք գարուն է գալիս»:Գարնան առաջին օր | մարտ | Դասվար |
| XXV | Զրույց բուժքրոջ հետ ««Անձնական հիգիենա»» | ուստարվա ընթացքում | Դասվար, աշակերտներ, |
| XXVI | Աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդես | մարտ | Դասվար |
| XXVII | «Զարմանահրաշ տիեզերք»<br>Տիեզերագնացության օր | Ապրիլի 12 | Դասվար |
| XXVIII | «Պահպանե՜նք ու սիրե՜նք մեր մոլորակը»<br>Երկրի օր | Ապրիլի 22 | Դասվար |
| XXIX | Այցելություն Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիր-կոթող և Ցեղասպանության թանգարան | ապրիլ | Դասվար |
| XXX | Ազգային և եկեղեցական տոները | ուստարվա ընթացքում | Դասվար |
| XXXI | Ուսուցիչների և ծնողների հետ կազմակերպել հանդիպումներ | մայիս | Դասվար |
| XXXII | Մասնակցել համադպրոցական շաբաթօրյակին և ծառատունկին՝ սերմանել սեր դեպի բնությունը | մայիս | Դասվար, աշակերտներ , ծնողխորհուրդ |